№ 59 Ապրիլ 9 (21) 1880 Ապրիլ 9 (21) № 59

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարվում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց օրգան.—Ներքին տեսութիւն: Երեխաների խնդիրը Եւրոպայում և Ռուսաստանում: Նամակ Ախալքալաքից: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր.—Արտաքին տեսութիւն: Ֆրանսիա.—«Մշակի» հեռագիրներ.—Յայտարարութիւններ.—Բանասիրական: Խենթը:

ՀԱՅՈՑ ՕՐԳԱՆ

Ընթերցողը կարդացած կը լինի «Մշակի» մէջ, որ ակադեմիկոս Գրուզինկօվ դիտաւորութիւն ունի հրատարակել Մոսկվայում մի ամսագիր և մի լրագիր, որոնք կը պարապեն Արևելքի ուսումնասիրութեամբ:

Ամսագիրը կը հրատարակվի ռուսերէն լեզուով, իսկ լրագիրը երեք լեզուներով՝ հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն լեզուներով:

Ի հարկէ դա ուրախալի երևոյթ է, որ վերջապէս Արևելքը դառնում է ռուս գրականութեան և լրագրութեան ուսումնասիրութեան առարկայ: Ռուսաստանը շատ քիչ տեղեկութիւն ունի արևելեան ազգերի կեանքի մասին և պ. Գրուզինկօվ, ինչպէս երևում է, կամենում է միջոց տալ ռուս հասարակութեանը ծանօթանալ արևելեան ազգերի կեանքի հետ:

Բայց բացի այդ տեսակ ամսագրից և լրագրից, հարկաւոր կը լինէր որ մայրաքաղաքներից մինի, կամ Մոսկվայի, կամ Ս. Պետերբուրգի հայերը մտածէին վերջապէս հիմնել իրանց օրգան ռուսերէն լեզուով:

«Մշակի» հրատարակման ամբողջ ընթացքի ժամանակ մենք անդադար յայտնում էինք այդ միտքը: Մենք ընդդէմ էինք Ս. Պետերբուրգի մէջ հայոց լեզուով ամսագիր հրատարակելու մտքին և ընդհակառակն առաջարկում էինք հիմնել մի ռուսերէն լրագիր, կամ ամսագիր, որ դառնար Ռուսաստանի հայերի շահերի օրգան:

Ահա հրէաներն անգամ կարողացան այդ միտքը իրագործել. նրանք ունեն Ռուսաստանում երկու լրագիրներ ռուսերէն լեզուով, մինը «Разсвѣтъ», իսկ միւսը «Русскій Еврей» վերնագրով: Եւ նրանք համարձակ գրում են իրանց լրագրի ճակատի վրա «Ռուսաստանի հրէաների օրգան»:

Ուրեմն շատ բաներում, մենք հայերս ստիպված ենք այժմ օրինակ վերցնել հրէաներից:

Ս. Պետերբուրգի և Մոսկվայի հայերը բոլոր միջոցներ ունեն իրագործել այդ տեսակ օրգան. ռուս մայրաքաղաքներում կան և ուսումնական հայերը և բազմաթիւ հայ ուսանողներ, որոնք կարող էին աշխատակցել լրագրին և վերջապէս հարուստ հայեր, որոնք նիւթական միջոց կարող էին տալ մի օրինաւոր օրգան հիմնելու և պահպանելու համար:

Եւ մենք հաւատացած ենք որ այդ տեսակ լրագիր շատ բաժանորդներ կունենար:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

II

Գ. Մեչնիկօվ արտասահմանի մէջ բնակվող երեխաների դրութիւնը նկարագրելուց յետոյ, խօսում է Ռուսաստանի երեխաների մասին:

Մանկավարժութիւնը հետազօտելով ուսումնարանների դրութիւնը այն եզրակացութեան է հասնում, որ նրանցից շատերը գիտութեան պահանջներին չեն համապատասխանում: Ռուսաստանի ուսումնարաններից շատերը այդ թւին են պատկանում: «Педагогическій музей», մեր ամենալաւ մանկավարժական թերթը, ասում է հեղինակը, կրթութեան եղանակը չը քննելով, իր առաջին համարներում ընդարձակ յօդուած է նուիրում մեր ուսումնարանների առողջապահական պայմաններին: Բժիշկ Զուբկօվսկու պաշտօնական քննութիւնների վրա հիմնված, այդ յօդուածը նկարագրում է Պօլօցկի գինուորական գիմնազիայի դրութիւնը:

Ուսումնարանի ազդեցութեան մասին երեխաների կազմուածքի վրա սկսեցին խօսել 30 տարի սրանից առաջ: Լուսաւորութեան մինիստրութեան թերթը 1869 թւին յայտնել է, որ «Ռուսաստանի մէջ շատ անգամ հասարակութիւնից գանգատներ են լսվում, թէ երեխաները գիմնազիաներում իրանց ոյժերին անհամեմատ աշխատանքներով են ծանրաբեռնված և որ այդ գանգատները շատ անգամ իրաւացի են լինում:» Ուսումնարանական իշխանութիւնը այն ժամանակ աշխատում էր ոչնչացնել ոյժերին անհամեմատ պարապմունքների վատ ազդեցութիւնը երեխաների առողջութեան վրա: Առողջութիւնը ամրացնելու համար ամեն տեղ սկսեցին մարմնամարզութիւն դաս տալ, բայց այդ բաւական չէր: Արտասահմանի մէջ բժիշկների հսկողութիւնը ուսումնարանների առողջապահական պայմանների վրա անհրաժեշտ են համարում: Ռուսաստանի մէջ բժիշկը ուսումնարանի մէջ օտար անձն է համարվում: Մինչդեռ նա կարող էր հասկացնել ուսուցչին, որ 10—12 տարեկան երեխային երկար ժամանակ կան-

ԽԵՆԹԸ

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԻԵ.

Ամենամեծ մարդիկն անգամ ունենում են խոշոր թուլութիւններ: Թօմաս էֆէնդին թէև մեծ մարդերի կարգին չէր պատկանում, բայց Ալաշկերտի գաւառում հսկայ էր համարվում: Առիւծ չը գտնված տեղում աղուէսն էլ խոշոր գազան է: Այդ մարդն էլ, որքան գործունեայ, որքան ճարպիկ էր, դարձեալ ունէր իր փոքրիկ թուլութիւնները: Ամբողջ ցերեկը անցկացնելով իր պաշտօնին վերաբերեալ աշխատութիւններով, գիշերները շատ անգամ լուսացնում էր նա զանազան տեսակ անբարոյական քէֆերով, և թուրք պաշտօնատարների մոլութիւններին հետևելով, արաղ էր խմում, աղջիկներ ու տղաներ էր պար ածում, և իրան շրջապատում էր զանազան տեսակ «չալկիներով» (երաժիշտ): Ամեն մի գիւղ մտնելիս, ամեն մի գիւղացու խրճիթի դռները բաց էին նրա առջև: Ո՞վ կարող էր չընդունել այդ բարձրաստիճան հիւրին: Ընդհակառակն, գիւղացին պատիւ էր համարում իրան, երբ Թօմաս էֆէնդին ոտք կը կոխէր նրա շեմքի վրա. թէև նրանից չէր շահվում, ուտեցնում էր, խմեցնում էր,—բայց այդ էլ բաւական էր, որ Թօմաս էֆէնդին կը սկսէր այնուհետև «բարի աչքով» նայել իր հիւրասիրողի վրա:

Մի երեկոյ գզիրը մի աղքատ գիւղացու տանը լուր տուեց, թէ էֆէնդին պէտք է հիւր լինի: Տան տէրը մի քանի գիւղերի միակ արհեստաւորն էր, շինում էր երկրագործական անօթներ, նորոգում էր վնասված գութաններ, արօրներ, սայլակներ և այլն: Նա ըստ մեծի մասին իր տանը չէր գտնվում, որովհետև ման էր գալիս գիւղից գիւղ և իր համար գործ էր պտռում: Այս երեկոյ նոյնպէս տանը չէր: Արհեստաւորի կինը պատասխանեց գզիրին, թէ մարդս տանը չէ, ինչպէս կարող եմ ընդունել էֆէնդուն:

—Մարդդ տանը չէ, տունը խօ իր տեղն է, ասաց գզիրը կոշտ կերպով:

Այդ գզիր կոչվածներն էլ մի առանձին պատիժ են խեղճ գիւղացու համար: Դրանք պաշտօնական անձինքների որսորդական շներն են. սաստիկ հոտառութիւն ունեն, և խիստ վարժված են, թէ ինչ ճանապարհներով պէտք էր հետամուտ լինել որսին...:

Արհեստաւորի կինը շուարած մնաց և խօսք չը գտաւ պատասխանելու գզիրին:

Գզիրը իր հրամանը կատարած համարելով, հեռացաւ, աւելացնելով.

—Էֆէնդին կը գայ, երբ ճրագները կը վառվին:

Խեղճ կինը մի քանի րոպէ, որպէս քարացած, կանգնել էր իր խրճիթի դրանը, և չը գիտէր, թէ ինչ պէտք էր անել: Նրա տղամարդը տանը չէր, նրան անվայել էր մի օտար և անծանօթ հիւր ընդունել իր մօտ: Նա մտաւ իր դրացի Օհօի խրճիթը և խնդրեց նրան, ասելով.

—Եղբայր Օհօ, գզիրը լուր տուեց, թէ էֆէնդին այս գիշեր մեզ մօտ պիտի լինի. մարդս տանը չէ, ի սէր Աստուծոյ, եկէք և կառավարեցէք նրան:

—Այս ինչ բան է, պատասխանեց Օհօն բարկանալով,—այս գիւղում էլ ուրիշ տուն չը կար:

—Չեմ իմանում, ասաց կինը վշտացած ձայնով,—գզիրը այսպէս պատուիրեց:

Դրացի Օհօն խոստացաւ, որ ինքը կընդունէ հիւրին և կնոջը մենակ չը թողնի:

Թօմաս էֆէնդին այնքան ծանօթ էր այս գաւառի հետ, որ ամեն մի գիւղ մտնելիս, շատ լաւ ընտրութիւն անել գիտէր իջևանների մէջ, թէ որ տունը աւելի յարմար էր գիշերելու համար: Նրա ճաշակը այդ մասին բաւական զարգացած էր: Գլխաւոր պայմանները, որ համապատասխանում էին նրա պահանջներին, դրանք էին, որ տան տէրը աղքատ և փոքր ինչ յիմար լինէր, և եթէ յիմար չէր, պէտք է գոնէ խմելու հետ սէր ունենար (երկու յատկութիւններ, որ շատ չեն զանազանվում միմեանցից) և ամենագլխաւորն այն էր, որ պէտք է տան մէջ գտնվէր մի գեղեցիկ կանացի դէմք, որի վրա նայելը զուարճութիւն պատճառէր նրան:

Բայց այս գիշեր ընտրած իջևանը մասամբ չէր համապատասխանում էֆէնդու պահանջներին. տան տղամարդը, վարպետ Պետրոսը, մի համեստ և աշխատասէր արհեստաւոր էր, ոչ յիմար էր և ոչ խմելու հետ սէր ունէր: Այսուամենայնիւ, էֆէնդին չէր սխալված իր ընտրութեան մէջ, որովհետև տղամարդը տանը չէր, կինը վատ չէր դէմքով, իսկ նրա հասած քոյրը իր գեղեցկութիւնով գիւղի մէջ առաջին աղջիկն էր համարվում:

Գիւղի խրճիթների մէջ ճրագները վառվեցան: Արհեստաւորի կինը, Սուսանը, թոնիրի վրա կերակուր էր պատրաստում: Արհեստաւորի քոյրը, մանկահասակ Վառվառէն, իւղի մէջ հաւեր էր տապակում: Դրացի Օհօն զանազան կարգադրութիւններ էր անում, որ ոչինչ պակաս չը լինի և ամեն բան վայելուչ լինի պատուելի հիւրին ընդունելու համար: Բոլորը պատրաստ էր, երբ յայտնվեցաւ էֆէնդին գզիրի առաջնորդութեամբ: Զափթիաներ այս գիշեր նա իր հետ չէր վեր առել, նրանց մի ուրիշ տեղ հիւր էր տուել:

Դրացի Օհօն ընդունեց էֆէնդուն ամենայն խոնարհութեամբ. և նա ծանր կերպով գնաց, նստեց իր համար պատրաստած օթոցի վրա:

—Ո՞ւր է վարպետ Պետրոսը, չէ երևում, հարցրեց էֆէնդին իր չուրջը նայելով,—ես նրան տեսնել էի ուզում, ես նրա հետ շատ հարկաւոր գործ ունէի:

Դրացի Օհօն պատասխանեց, թէ վարպետը դընացել է մերձակայ գիւղը բանելու համար:

—Ափսոս, շատ ափսոս, որ տեսնել չը կարողացայ. ես նրա հետ հարկաւոր գործ ունէի, կրկնեց էֆէնդին, և սկսեց բացատրել, թէ թագաւորական զօրքերին պաշար տեղափոխելու համար իրան պէտք են շատ սայլեր, և ցանկանում է վարձել մի մշտական հիւսն, որ ճանապարհների վրա սայլերը վնասվելիս, նորոգէր նրանց, և վարպետ Պետրոսից աւելի յարմար մարդ չէ գտնում, և կամենում է նրան «մի լաւութիւն» անել, որ նա շահվէր այդ գործից, և մի քանի ամիսների համար շարունակ պարապմունք ունենար:

Թէև էֆէնդին առաջուց գիտէր, որ վարպետը տանը չէ, թէև նրան ամենևին վարպետ հարկաւոր չէր, որովհետև զօրքերին պաշար տեղափոխելու համար նա գիւղացիների սայլերը և անասուններն էր գործ ածում, բոլորովին ձրի, առանց մի փարայ վճարելու, և եթէ մի սայլ վնասվում էր, իրանք՝ տէրերն էին շինել տալիս,—բայց էֆէնդին այս խօսքերը ասելու մէջ մի առանձին նպատակ ունէր: Աղքատ արհեստաւորի կինը, Սուսանը, լսելով էֆէնդու խոստմունքները, ուրախացաւ, մտածեց, թէ այդ հիւրից մեծ շահեր կարող են ստանալ, թէև նրա ինքնակոչ հիւր լինելը սկզբում այնքան ծանր և անախորժ երևեցաւ իրան: Պէտք էր մի յօյսով քաղցրացնել միամիտ տանտիկնոջ սիրտը,—այդ էր հարկաւոր էֆէնդուն:

Էֆէնդին միայն նստած էր: Դրացի Օհօն դեռ ոտքի վրա սպասում էր, որ նրանից թոյլտուութիւն ստանայ, որ ինքն էլ նստէ: Այդ շնորհը ստացաւ գնեցնել, կամ չոքացնել նրան, երեխայի համար կատարեալ տանջանք է: Այդ բոլորը ֆիզիկական ծանրաբեռնութիւններ են, իսկ մտաւոր ծանրաբեռնութեան ժամանակ աւելի էլ մեծ սխալներ են լինում: Օրինակ, երբ մատնացոյց են լինում աշակերտներին մեծ քանակութեամբ մի և նոյն դասատան մէջ թողնելու վրա, մանկավարժները պատասխանում են, որ աշակերտների մի երրորդական մասը թողնում են նոյն դասատունը այն դիտաւորութեամբ, որպէս զի նրանց մտաւորապէս չը ծանրաբեռնեն, ոյժերից վեր աշխատանք չը տան: Իրանք ծնողները խնդրում են շատ անգամ, որ իրանց երեխաներին մի և նոյն դասատանը երկու տարի պահեն, որպէս զի սովորածը մնայ նրանց յիշողութեան մէջ, իսկ շատ անգամ գանգատւում են, որ երեխաներին ի զուր են անցկացրել միւս դասատունը:

Բժիշկ Զուբկովսկի ասում է, որ «այժմեան կրթութեան ձեւը վատ ազդեցութիւն է անում կազմուածքի վրա և գլխաւորապէս աչքերի վրա»: Այդ պատճառով նա խորհուրդ է տալիս շատ ժամանակ նուիրել երեխայի ֆիզիկական զարգացմանը և նրան օրվայ 3/4 չը ստիպել գրքերով պարապել: Բժիշկ Վիրենիուսից Վվեդենսկի գիմնազիայի մէջ արած հետազօտութիւններից երեւում է, որ երեխաներից շատերի մարմնական կերակուրը անբաւականացուցիչ է, կաշին գունատ, չոր, բարակ, երեխաների միայն կէս մասի մկանունքները լաւ զարգացած են: Ծոյլութեանը ամեն բան վերաբերում են, մինչեւ ընդհակառակը աշակերտները աշխատելու ցանկութիւն ունեն, բայց չեն կարողանում: Հեղինակը խորհուրդ է տալիս ուշադրութիւն դարձնել 10—13 տարեկան երեխաներին առաջին երեք դասատուների կուրսը անցնելու ժամանակ, լսել ծնողների և վերակացուների խորհուրդները:

Նոյն «Педагогическiй Музей» թերթի մէջ տպված են պրոֆեսոր Լեսգաֆտի հետազօտութիւնները ուսանողական հասակում հիւանդանալու մասին: Հեղինակը գտնում է, որ առողջապահական առաջին պայմանը, երեխայի բնական զարգացումը չարգելելու մասին, Ռուսաստանում չէ կատարվում: «Մեր միաձև շորերը և պահանջողութիւնը, որ երեխան կոճկված լինի, արգելում են երեխայի կուրծքի, բողպի և փորի զարգանալուն:»

Մեր ուսումնարաններում երեխաների հանգստութեան համար ոչինչ յարմարութիւն չը կայ: Պահանջվում է, որ երեխան որքան կարելի է շատ կանգնի. պէտք է մեծերը նստած լինեն: Իսկ գլխաւորը դրան հակառակ է: Երեխաները այնքան չեն ուտում և բաց օդի մէջ չեն լինում, որքան հարկաւոր է թոյլ կազմուածքի համար: Այդպիսով մարդ դեռ ուսումնարանի նստարանի վրա տեղական հիւանդութիւն է ստանում:

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

22 մարտի

Կարդալով ձեր լրագիրների էջերում Վանայ գաւառի մեր ազգայնոց աղէտալի վիճակը, չը կամեցանք մենք ևս անմասն մնալ ուստի հանգանակութիւն բաց արինք կանանց սեռի մէջ, ուր հաւաքվեցաւ 143 ր. 30 կ., որոնք ուղարկելով ձեզ, խնդրում ենք հասցնել ուր հարկն է, տպելով միանգամայն նուիրատուների անունները. Տիկին Փեփրոնիէ Յարութիւնեանց 4 ր., տ. Արեքնազան Վարդանեանց 3 ր., տ. Սրբուհի Երեցփոխեանց 3 ր., Դշխուհի Յովհանջանեանց 3 ր., տ. Դշխուհի Գրիգորեան 3 ր., տ. Արեքնազան Նալբանդեանց 3 ր., տ. Շողակաթ Յարութիւնեանց 3 ր., տ. Սողոմէ Բարսղեանց 3 ր., տ. Իսգաբէր Շահպարոնեանց 3 ր., տ. Մարիամ Յարութիւնեանց 3 ր., տ. Սրբուհի Մառանճեանց 3 ր., տ. Վերոնիքայ Թորոյեանց 3 ր., տ. Նունիա Դարբինեանց 3 ր., տ. Աշխէն Բախչինեանց 3 ր., տ. Հռիփսիմէ Մարգարեանց 3 ր., տ. Աննա Ղազանճեանց 2 ր., տ. Վերոնիքայ Աւետիքեանց 2 ր., տ. Հռիփսիմէ Մարգարեանց 2 ր., տ. Աննա Ազասեկեանց 2 ր., տ. Աննա Զարուխճեանց 2 ր., տ. Մարիամ Յարութիւնեանց 2 ր., տ. Մարիամ Մարգարեանց 2 ր., տ. Հեղինէ Մարգարեանց 1 ր., տ. Նազլու Մարգարեանց 1 ր., տ. Մարիամ Մեռկեզեանց 1 ր., տ. Հերիքնազ Պիճիկեանց 1 ր., տ. Փեփրոնիէ Տէր-Կիրակոսեանց 1 ր., տ. Իսգաբէր Փեշտամալճեանց 1 ր., տ. Գայանէ Մեծատունեանց 1 ր., տ. Կատարինէ Նուրեանց 1 ր., տ. Հեղինէ Աւետիսեանց 1 ր., տ. Լիզա Թաթարեանց 1 ր., տ. Մարիամ Երզնկեանց 1 ր., տ. Շողակաթ Գասպարեանց 2 ր., տ. Գայանէ Կեցցոյեանց 1 ր., տ. Նազելի Տիգրանեանց 1 ր., տ. Շողակաթ Շահպարոնեանց 1 ր., տ. Արեքնազան Պապինեանց 40 կ., տ. Փեփրոնիէ Ափովեանց 1 ր., տ. Աննա Մաղաքեանց 1 ր., տ. Վարդուհի Սահաթճեանց 1 ր., տ. Նոյեմզարա Միրաքեանց 1 ր., տ. Մարիամ Մալխասեանց 1 ր. ր., տ. Գայանէ Փարաքասիկեանց 1 ր., տ., Շուշանիկ Դէմիրջօղլեանց 1 ր., М. Екатерина Лайкова 1 ր., օրիորդ Շուշանիկ Վարդանեանց 2 ր., օր. Սոֆեայ Յովհանջանեանց 1 ր., օր. Հերիքնազ Պիճիկեանց 1 ր., օր. Շողակաթ Քաջազնունի 1 ր., օր. Անախանում Մատոյեանց 90 կ., Հայկանուշ Ղազանճեանց 1 ր., օր. Գէնօվարէ Մեծատունեանց 1 ր., տ. Երանուհի Գրիգորեանց 1 ր., օր Երանեակ Վարդանեանց 1 ր., պ. Անտոն Քանանեանց 50 ր.: Գումարն է 143 ր. 30 կ.: Փոստի ծախսը վճարեց տ. Աշխ. Բախչինեանց:

Հանգանակող Հայուհիք Տ. Աշխէն Բախչինեանց, օր. Սոփեայ Յովհանջանեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 31 մարտի

Ձեր պատուական լրագրի թերթերից տեղեկանալով երբեմն փառքով ու պատւով պանծացեալ Վասպուրական երկրի մեր արիւնակից հայ եղբայրների այն անմխիթար և աննախանձելի դրութիւնը, որի գլխաւոր և միակ պատճառն է սովը, մարդկային սրտի յատուկ կարեկցութեան ձայնը և հայ անունը ինձ քաջալերեց իմ ծանօթներից հանգանակութիւն հաւաքել և յանձնել ձեր յարգութեանը, խոնարհաբար խնդրելով այս չնչին գումարը ընդունել ինձանից և հասուցանել ըստ պատկանելոյն, ընդ նմին չը զլանալով հրատարակել և այն անձանց անունները և ազգանունները, որոնք չը խնայեցին իրանց սրտից բղխած ողորմութիւնը ձգել կարօտեալների գանձանակի մէջ:

Յոյն Սօրի Կիպրիանի 3 ր., Սօլօմօն Բոյադժօլով 3 ր., Յովհաննէս Քոչարեանց 2 ր., Արիստակէս Մելիքազիզեանց 1 ր., Կատարինէ Մարգարեան 1 ր., Մելքսէթ Մարգարեանց 1 ր., Յովհաննէս Խանկելեան 1 ր., Սարգիս Յարութիւնեան 1 ր., Н. Коваленко 1 р., Զօվանի Ջօրջէ 1 ր., Մ. Տէր-Յովհաննէսեան 1 ր., Վասօ Քամօյեվ 1 ր., Եփրեմ Խահակով 1 ր., Արտէմ Կուտոյեվ 1 ր., Կարապետ Վարդանով 1 ր., Արամ Մակլիսով 1 ր., Պ. Կուզանով 1 ր, Սարգիս Ղարիբօվ 1 ր., Մովսէս Տէր-Առաքելով 1 ր., Գրիշկայ Բարսեղօվ 1 ր., Մահտեսի Սերոբ Թերջանեանց 1 ր., Աւետիք Գրիգորով 1 ր., Արշակ Ղոնդաղսազով 1 ր., Ռւսուփ Շերիֆ-օղլի 1 ր., Պօղոս Պետրոսեանց 1 ր., Մնացական Ախվերդով 1 ր., Գրիգոր Ստեփանով 1 ր., Գէօրգի Տէր-Աստուրօվ 1 ր., Օհան Սարգիսով 1 ր., Գ. Ք. 1 ր., Անյայտ ոմն 1 ր., Եսայոր Խօջափարուխով 1 ր., Եօվանէ Լօմինով 1 ր., Յովհաննէս Մկրտումով 1 ր., Մ. Յովհաննէսեան 1 ր., Մկրտիչ և Կօնօ Լալայեվ 1 ր., Նիկօլայ Մելիք Մուրադօվ 1 ր., Անյայտ ոմն 1 ր., Անյայտ անձինք 8 ր. 70 կ., Դաւիթ Թօրօսօվ 60 կ., Անյայտ ոմն 60 կ., Աստուածատուր Տէր-Մարտիրոսեանց 50 կ., Մովսէս Գէորգեան 50 կ., Մահմուտ Դէրիք օղլի 50 կ., Սիմէօն Առաքելեան 50 կ., Խաչատուր Բունիաթեան 50 կ., Մարտիրոս Եղեանց 50 կ., Աղէքսանդր Խուբեանց 50 կ., Անյայտ ոմն 50 կ., Անյայտ ոմն 50 կ., Սիմէօն Գաւրիանօվ 50 կ., Սիմէօն Եգիտխանով 50 կ., Սանդրօ Խօջափարուխով 50 կ., Խաչատուր Խումարեանց 50 կ., Բագրատ Օհաննէսեանց 50 կ., Գէորգ Բէգլարեանց 50 կ., Գէօրգի Ղալամքարօվ 50 կ., Ջուրաբ Օքօեվ 50 կ., Աւետիք Վարդանօվ 50 կ., Թօրօս Շէկօյեանց 50 կ., Համբարձում Յարութիւնեանց 50 կ., Մարգարիտ Աւետիսեանց 40 կ., Բուղդանեանց 40 կ., Վասօ Իսպբաշով 40 կ., Արտէմ Թունիօվ 40 կ., Եղիայ Կարապետեանց 35 կ., Սարգիս Դամչեան 35 կ., Ռաֆայէլ Պապիկեանց 30 կ., Աղէքսանդր Տէր-Գէորգեանց 60 կ., Ռաժդէն Խուբոյեվ 50 կ., Արութիւն Մուղլարուֆով 50 կ., Անյայտ ոմն 1 ր., Նիկօլայ Մելիք-Մուրադեանց 1 ր., Միխայիլ Լազիեվ 50 կ., Գիվի Գիվի-շվիլի 50 կ., Պէտրէ Ջազիկով 50 կ., Ակօբջանօվ 1 ր., Կիկօ Վաժիկաշվիլի 1 ր.: Գումարն է 72 ր. 10 կ.:

Արտէմ Մարգարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հաստատ աղբիւրից լսում ենք, որ վերջապէս մի հմուտ ուսուցիչ գաւառական քաղաքներից մէկում, ձեռնամուխ է եղել մանրամասնաբար քննելու մեր ուսումնարանների այժմեան անմխիթար ուղղութիւնը, ներկայացնելով իր պրօգրամման: Աշխատութիւնը կը կրէ «Մեր ուսումնարանների րեֆորմ» վերնագիրը և կը տպվի «Մշակի մէջ:

—

Լսում ենք որ Թիֆլիսում նոր բացվելի «Միքաչէլեանց» արհեստանոցի դիրեկտոր ընտրվել է հմուտ ինժիներ-տէխնոլօգ պ. Մկրտիչ Կարապետեան: Մենք հաստատ գիտենք որ պ. Կարապետեանը հրաժարվում է իր ստացող երեք հազար րուբլի ռոճիկից և համաձայնվում է երկու հազար ստանալու, այն մխիթարութիւնով, որ այդպիսի զոհաբերութիւնը ծառայում է հայ հասարակութեան օգտին: Չենք կարող չը ողջունել երիտասարդ տէխնօլօգի այդ ազնիւ վարմունքը, որի օրինակը շատ քիչ ենք տեսնում մեր այժմեան ինտէլիգենցիայի մէջ:

—

Հաստատ աղբիւրից իմանում ենք որ Թիֆլիս-

նա: Գզիրը ոտքի վրա մնաց, սպասաւորութիւն էր անում, որովհետև արհեստաւորի տանը ոչ ծառայ կար և ոչ չափահաս տղայ. նա մի քանի աշակերտներ ունէր, որոնց իր հետ էր տարել: Տանտիկինը և արհեստաւորի քոյրը չէին երեւում, նրանք առանձնացել էին խրճթի մի կողմում, որ բաժանված էր հիւրի նստած տեղից ցած տախտակապատով, որի վերին մասը չէր հասնում առաստաղին և ծառայում էր որպէս չիրմայ:

Բայց նրանք պէտք է իրանց յարգանքը յայտնէին պատուելի հիւրին, այս պատճառով երկուսն էլ, թէ Սուսանը և թէ Վառվառէն, դուրս եկան իրանց թաքստի տեղից, գլխեցին էֆէնդուն, և ձեռքները սրտերի վրա դնելով, հեռուից լուռ գլուխ տուեցին: Այդ նշան էր, թէ «բարով էք եկել»:

—Շատ ապրէք, ասաց էֆէնդին, մի կողմնակի հայացք ձգելով նրանց վրա:

Տանտիկնոջ երեսը ծածկած էր քօղով, իսկ մանկահասակ աղջկանը բաց էր: Նրանք կրկին հեռացան և սկսեցին ընթրիքի սեղանը պատրաստել:

Փոքրիկ խրճիթի մէջ տիրում էր խորին լռութիւն. ոչ ոք չէր խօսում, բոլորը սպասում էին որ էֆէնդին խօսէ:

—Դու այժմ ինչով ես պարապվում, հարցրեց նա դրացի Օհօից:

—Անգործ եմ, աղայ, պատասխանեց Օհօն ծոծրակը քորելով.—Աստուած ինձ պատժեց, մի տարուայ մէջ մի քանի անբախտութիւններ պատահեցան. մեծ որդիս «քո չարը տարաւ»... անասուններս «քեզ մատաղ դարձան»... հիմայ արօրս էլ չէ բանում... մնացել եմ անգործ:

—Ափսոս, շատ ափսոս, ասաց էֆէնդին ցաւակցելով,—դու լաւ մարդ ես, Օհօ, ես քեզ ճանաչում եմ, ես չեմ թողնի, որ դու անգործ մնաս, քեզ գործ կը տամ, ինձ հիմայ շատ մարդիկ են հարկաւոր:

Օհօի ուրախութեանը չափ չը կար:

—Դուք միայն գործ յանձնեցէք, աղայ, այն ժամանակ կը տեսնէք, թէ Օհօն որպէս լաւ ծառայել գիտէ:

—«Էշը որքան լաւ բանէ, այնքան իր գարին կաւելացնէ»...

—Ի հարկէ, այդպէս է:

Էֆէնդին այն կարգի մարդերիցն էր, որ պատահած տեղը այն աստիճան կը հպարտանար, կը փքվէր և կը բարձրացնէր իրան, որ «դարպասի դռնովը չէր կարող ներս մտնել», իսկ երբեմն այնքան կը փոքրանար, որ ասեղի ծակով անց կը կենար: Գիւղացու խրճթում, երբեմն նա շատ մտերիմ էր լինում, և վարվում էր այնքան ընտանեբար, որպէս մարդիկ վարվում են մի յայտնի տներում, որոնց թշուառ բնակիչներին փողոցում պատահելիս ամաչում են գլուխ տալ....

Պէտք էր մի խոստմունքով կաշառել դրացի Օհօին, նա այստեղ այս գիշեր տան տիրոջ պաշտօն էր կատարում: Եւ միամիտ գիւղացին բոլորովին հաւատալով նրան, յայտնեց իր խորին շնորհակալութիւնը, ասելով.

—Աստուած քեզ երկար կեանք տայ, աղայ, Աստուած ձեր ձեռքը մեր գլխից անպակաս անէ:

Ընթրիքի ժամանակ էր: Յայտնվեցաւ Վառվառէն, լուացվելու պարագայքը ձեռքին բռնած, և շնորհալի կերպով դրեց էֆէնդու առջև, նա սկսեց լուանալ իր ձեռքերը: Յետոյ տարածեց նա սեղանի սփռոցը, հաց դրեց, և կերակուրները, որքան որ պատրաստված էին, բոլորը միանգամից շարեց սեղանի վրա, իրանց պատշաճաւոր տեղերում: Այդ բոլոր սպասաւորութիւնների ժամանակ երեւում էր անմեղ աղջկայ անհամարձակութիւնը, խառն երկչոտութեան և ամօթխածութեան հետ, որ զարգացել էին նրա մէջ փակված կեանքից և օտար տղամարդերի հասարակութեան հետ հաղորդակցութիւն չունենալուց:

—Զաւակս, հարցրեց էֆէնդին մանկահասակ աղջկանից,—քո անունը ինչ է:

Նա կարմրեց, շփոթվեցաւ և սկսեց այս կողմ և այն կողմ նայել, որ մէկը իր փոխարէն պատասխանէ: Դրացի Օհօն ասաց, թէ անունը Վառվառէ է:

—Ի՛նչ գեղեցիկ անուն է, ճշմարիտ, շատ գեղեցիկ անուն է, կրկնեց էֆէնդին հիացմունքով,—ես էլ մի քոյր ունեմ, այսպէս է կոչվում:

Այժմ Վառվառէի սառն դէմքի վրա փայլեց ժպիտի նման մի բան, երևի, նա ուրախացաւ, որ ինքը մի այնպիսի մեծ մարդու քրոջ անունն էր կրում, թէև էֆէնդին ամենևին քոյր չունէր, բայց պէտք էր Վառվառէին ևս մի բանով ուրախացնել:

Սեղանի վրա ուտում էին էֆէնդին և Օհօն միայն: Կնիկները այս կողմերում տղամարդերի հետ սեղանակից չեն լինում:

—«Անջուր ջրաղացը աւիւր չի աղայ», նկատեց էֆէնդին:

Դրանով նա հասկացրեց, թէ պէտք էր մի բան խմել և հրամայեց գզիրին, որ գնայ, արաղ բերէ: Դրացի Օհօն ներողութիւն խնդրեց, որ այդ մասին չեն մտածել, և տանտիկինը, որ չէր խօսում, մի կերպով հասկացրեց, թէ ինքը շուտով բերել կը տայ արաղը:

—Չէ, պատասխանեց էֆէնդին,—այդ իմ սովորութիւնն է, ամեն տան մէջ հաց ուտելիս, արաղը և գինին պէտք է իմ հաշուով լինեն:

Այդ իրաւ էր, էֆէնդին այստեսակ աղքատ տներում գզիրի ձեռքով ինքն էր բերել տալիս խմիչքները, միայն հաշիւը անցնում էր գիւղի ընդհանուր ծախսերի մէջ: Բայց նրա սատանայական խորամանկութիւնը այդ բանի մէջ այն էր, որ խմիչքները ինքը բերել տալով, կարող էր գործ ածել այնքան, որքան իր ցանկութիւնն էր:

Շուտով գզիրը վերադարձաւ, բերելով իր հետ մի ահագին աման արաղով:

—Հիմայ կարող ես նստել, հրամայեց նրան էֆէնդին,—և մեզ սաղիութիւն (մատռուակութիւն) անել:

Գզիրը նստեց ամենից ցած և արաղի ահագին ամանը դրեց իր մօտ: Նրան յայտնի էր էֆէնդու սովորական պատուէրը, թէ «երբ մի տուն մըտնում ես, և ուզում ես, որ ուրախ անցկենայ, պէտք է առաջ տանտիրոջ բամբակը թաց անել»: Նշանակում է՝ պէտք է նրա ուղեղը թմրեցնել, պէտք է նրան հարբեցնել: Այստեղ թէև տանտէր չը կար, բայց դրացի Օհօն նրա տեղն էր բռնում: Այս պատճառով գզիրը զօռ էր տալիս, յաճախ արաղի բաժակը դէպի Օհօն դարձնելով:

Դրացի Օհօն փոքր ինչ սէր ունէր խմիչքի հետ: Մանաւանդ նրան պատահած վերջին անբախտութիւններից յետոյ, երբ նրա մեծ որդին մեռաւ, երբ նրա անասունները կոտորվեցան,—Օհօն իր վշտերը մոռանալու համար բոլորովին անձնատուր եղաւ արաղի: Նա ընդունած բաժակը մինչև վերջին կաթիլը ցամաքեցնում էր: Մի կողմից արաղի ազդեցութիւնը, միւս կողմից էֆէնդու խոստմունքները, թէ նրան գործ և պարապմունք կը տայ, այն աստիճան տաքացրին, այն աստիճան ուրախացրին Օհօին, մինչև իրան մոռանալով, նա սկսեց երգել զանազան թուրքերէն երգեր:

—Դրանով բան չի դառնայ, ասաց էֆէնդին, և հրամայեց գզիրին, որ գնայ «չալկիներին» կանչէ:

«Չալկիները» մի խումբ տեղային հայ երաժիշտներ էին, որ երգում էին և ածում էին զանազան ասիական նուագարանների վրա: Դրանք անբաժան հետևում էին էֆէնդուն, ինչ գիւղ որ նա գնում էր, որովհետև գիտէին որ էֆէնդին գիշերները

Ալեքսանդրոպոլեան խճուղին (շօսէն) կանցնի ոչ Լօքի անմարդաբնակ ձորով, ինչպէս այդ նախագծած էր սկզբում ինժեներական վարչութեամբ, այլ նոր խճուղին կանցնի աւելի կարճ և կարևոր կէտերով, ինչպէս Կողի, Շուլավէր և Ջալալ-Օղլի: Այս շահաւէտ փոփոխութիւնը կատարված է, որչափ մեզ յայտնի է, Кавказъ լրագրի մէջ պ. Մ. Սաղաթէլեանի յայտնած խորհրդի համեմատ, որ շատ ուրախալի է, ինչպէս մի գրականական յաղթութիւն հասարակական ձեռնարկութիւնների վերաբերմամբ:

—

Լսում ենք որ եկող տարվայ հնագիտական միջազգային ժողովքի համար մի քանի հետախուզութիւններ անելու համար Հայաստանում պ. Ա. Երիցեանը, տէրութեան հաշւով, ուղարկվում է շուտով տաճկաց Հայաստան: Մենք կը ցանկայինք աջողութիւն պ. Երիցեանին, մանաւանդ որ, ցաւակցաբար պիտի ասած, հնագիտութեամբ պարապվողներ շատ քիչ կան այժմ Կովկասում, մինչդեռ եկող տարուայ ժողովքում Հայաստանի հնագիտութիւնը մեծ տեղ պիտի բռնէ:

—

Յայտնի է արդէն որ Կովկասեան Ցենզուրական կոմիտէտը դատ է սկսել «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունու դէմ: Գործը պէտք է քննվի Թիֆլիսի նահանգական դատարանում մայիսի 23-ին: Մեր տեղական երկու թերթերը ռուս «Обзоръ» և հայոց «Մեղու», որոնց համար գոյութեան նպատակն է յարձակվել «Մշակի» դէմ, գործ դնելով ամենատեսակ ստոր և կեղտոտ միջոցներ մեզ վնասելու համար, դեռ չը սպասած որ դատարանը քննի գործը և վճռի ով է արդար և ով է մեղաւոր, նոյն իսկ գործի հետ էլ բոլորովին ծանօթ չը լինելով, իրանց թոյլ են տալիս յանդուգն և անամօթ կերպով մեղադրել Գրիգոր Արծրունուն և նրա դէմ ամենաստոր ինսինուացիաներ անել: Որքան անազնիւ և ստոր է այդ տեսակ վարմունք,—թողնում ենք դատել հասարակական կարծիքին, իսկ ինքներս հանգիստ կերպով կը սպասենք դատարանի վճռին, մեր արժանաւորութեանից ստոր համարելով որ և է բանակռիւ սկսել այնպիսի թերթերի հետ, որոնց պարապմունք է միմիայն ցեխ ցգել ուրիշի երեսին, աղաւաղել փաստերը և ուրիշի պատիւն ու անունը աշխատել վայր ցգել, իրանց բաժանորդների թիւը աւելացնելու և իրանց սեփական կեղտը ծածկելու նպատակով: Ստոր շահասիրութիւնը ում վարմունքի շարժառիթն է,—թող դարձեալ հասարակութիւնը դատէ: Դա կը լինի մեր վերջին խօսքը, իսկ գործի մանրամասն բացատրութիւնը,—մենք դատարանի առջև կը տանք, մեր արժանաւորութիւնից ստոր համարելով որ և է բացատրութիւններ տալ այնպիսի գրականական պամպուլիներին, ինչպէս են պ. պ. Նիկոլաձէ և Սիմէօնեանց:

—

Պ. Գրիգոր Անեան և Տ. Շուշանիկ (Սանդուխտ) Անեան ուղարկելով մեզ 14 ր. յօգուտ Վասպուրականի սովատանջների, գրում են մեզ հետեւեալը: «Ինչպէս որ խոստացած էինք «Մշակի» № 23 մէջ մեր գրած նամակում, ահա ուղարկում ենք ձեզ մարտ ամսի մեր արդիւնքի 5°/₀, որն անում է 14 րուբլ: Խնդրում ենք այդ փողը հասցնէք Վասպուրականի մեր սովատանջ եղբայրներին և քոյրերին:»

—

ԹԻՖԼԻՍՈՒՄ բնակվող պ. Մկրտիչ Տէր-Մկրտչեանց ուղարկել է մեզ 13 րուբլ յօգուտ Վանի սովատանջների, որ նա ժողովել է հետեւեալ անձինքներից,—տիկին Մարիամ Ալղաղանեանց 10 ր., իշխանուհի Մարիամ Յովսէփեան Տարխան-Մոուրավօվ 2 ր., և Մկրտիչ Տէր-Մկրտչեանց 1 ր., ընդամենը 13 րուբլ:

—

ԿԱՏԱՎԻՑ պ. Բաբուրօվ ուղարկել է մեզ 10 րուբլ, որպէս զի մենք հասցնենք այդ փողը Վանի սովատանջներին:

—

Հինգշաբթի, ապրիլի 3-ին, ԹԻՖԼԻՍԻ Թատրոնում տրվեցաւ մի կօնցէրտ յօգուտ Թիւրքիայի հայ սովատանջների: Մասնակցում էին՝ տիկին Գամբարօվ, օրիորդ Խոսրօվ, օրիորդ Սիրանուշ, պ. պ. Ադամեան, Մէսիփ, Մանդինեան և ուրիշները: Օրկէստրը ածեց Չուխաջեանցի «Արշակ II» օպէրայի ուվէրտիւրան, իսկ օր. Սիրանուշ երգեց պ. Կորղանովի մի ռոմանս: Կարգադրողները աշխատեցին կազմել կօնցէրտը այնպէս որ կատարված պիէսաների մի քանիսները հայ հեղինակների գրուածներ լինեն: Տիկին Գամբարօվի և օր. Խոսրօվի երաժշտական գեղեցիկ ընդունակութեան մասին մենք աւելորդ ենք համարում խօսել: Նրանց խաղը որդէն յայտնի է Թիֆլիսցիներին: Կենդանի պատկերները, մեր կարծիքով, շատ անաջող էին և ոչինչ տպաւորութիւն չը թողեցին հանդիսականների վրա. սոված մարդիկ ու կանայք ճոխ հագուստներով, յետոյ փոխանակ ցոյց տալու ինչպէս բաւականութիւն են ստանում սովատանջները, մեր աչքի առջն ներկայացաւ հին հռոմէական կամ յունական շքեղ խնջոյք: Որքան է եղել երեկոյի զուտ արդիւնքը,—մեզ յայտնի չէ: Բայց ասում են եղել է զուտ արդիւնք 100 րուբլ:

—

Ասում են որ ապրիլի 3-ին Թիֆլիսի Թատրոնում յօգուտ սովեալց տուած կօնցէրտի մասնակցողները վճարեցին դահլիճի համար Թիֆլիսի հայոց Թատրօնական կոմիտէտին 300 րուբլ: Այդ օրը կոմիտէտի ներկայացման օրն էր, իսկ յայտնի է որ կոմիտէտը վճարում է Պալմին 200 րուբլ իւրաքանչիւր երեկոյի համար: Այժմ, չը նայելով որ կօնցէրտը բարեգործական նպատակով էր, այն էլ յօգուտ Վանի սովատանջների, կոմիտէտը չը բաւականացաւ պահանջելու իր 200 րուբլ կօնցէրտ տուողներից, այլ աւելացրեց դարձեալ 100 րուբլ շահ: Բաւական չէ որ կոմիտէտը մինչև այժմ ոչինչ չը տուեց յօգուտ Վանի սովատանջների, բայց աշխատում է շահվել երբ ուրիշները այդ նպատակով կօնցէրտ են տալիս:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Փարիզում հրատարակվող կղերական ուղղութեան «Univers» լրագրի մէջ տպված է հետեւեալ նկատողութիւնը:

Մի քանի լրագիրներ հաղորդում են, որ սենատօրներ, պատգամաւորներ և հոգևոր միաբանութիւնների ներկայացուցիչներ խորհրդակցում են Ֆրանսիական կառավարութեան վերջին հրամանների առիթով: Ճշմարիտ է այդպիսի խորհրդակցութիւններ եղել են և դարձեալ կը լինեն: Այժմ մենք դրանից աւելի ոչինչ չենք հաղորդի, այսքանը միայն կասենք, որ կատարեալ համաձայնութիւն է տիրում այդ անձինքների մէջ և որ նրանք եռանդով կընդդիմադրեն կառավարութեանը: Բերլինում հրատարակվող «National-Zeitung» լրագրին հեռագրում են, որ պապը բողոքել է Ֆրանսիական կառավարութեան վերջին հրամանների դէմ և հրամայել է իր ներկայացուցչին որ նա զգուշ լինի, չընդհատէ իր յարաբերութիւնները կառավարութեան հետ, բայց մի և նոյն ժամանակ հոգևոր միաբանութիւնների անդամներին խորհուրդ չը տայ հնազանդվել կառավարութեան հրամանին: Պապի բողոքի մէջ ցաւակցութիւն է յայտնած Ֆրանսիական կառավարութեանից վերջին ժամանակներում հոգևորականների վերաբերութեամբ գործ դրած միջոցների առիթով: Պապը, ինչպէս երևում է, չէ ցանկանում, որ Ֆրանսիայի և Հռօմի դիպլօմատիական յարաբերութիւնները ընդհատվեն: Իսկ կղերականները աշխատում են գործը այդ վախճանին հասցնել:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 ապրիլի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Կուբանսկի և Տերսկի հեծելազօր գունդերի զինուորներին հրամայած է այլ ևս չը գործածել ասիական ձևի հարուածող ատրճանակներ:

ԽԱՐԿՕՎ, 3 ապրիլի: Թագաւոր Կայսրը, կոմս Լօրիս-Մելիքօվի առաջարկութեան համեմատ, կատարեալ ներումն շնորհեց զինուորական դատարանից դատապարտված Վանգակօվ, Սուտէյկին և Զուգուեվ համալսարանի ուսանողներին: Այդ ուսանողները մեղադրվում էին յանցաւոր պրօպագանդայի մասնակցելու մէջ: Իշխան Գօրչակօվի առողջութիւնը առաջվայ դրութեան մէջ է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 ապրիլի: Պետական բանկի 5°/₀ տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր. 87 կ., երկրորդ 92 ր. 75 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 12 կ., ներքին 5°/₀ առաջին փոխառութեան տոմսակը արժէ 22 ր., երկրորդ 221 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր., երկրորդ 91 ր., երրորդ 91 ր. 12 կ., ոսկի 6 ր. 75 կ.: Ռուսաց 1 րուբլ Լօնդօնի վրա արժէ 25,28 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 215 մարկ 50 պֆ., Փարիզի վրա 275 ֆր. 50 սանտ: Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 ապրիլի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Թագաւոր Կայսրը հաւանութիւն տուեց Կարգադրող Բարձր Մասնաժողովի կարգադրութեանը՝ պօլիցիայի հսկողութեան տակ եղած և վարչական ձևով արտաքսված անձինքներին վերաբերեալ տեղեկութիւնները վերաքննելու համար: Կարգադրութեան նպատակն է թեթեւացնել յիշեալ անձինքներից, մանաւանդ ուսանողներից, նրանց դրութիւնը, որոնք նահանգապետների վկայութեան համեմատ, խոստովանեցին իրանց յանցանքը: «Правит. Вѣстн.» հաղորդում է, որ վարչական ձևով արտաքսելու մասին Արևելեան Սիբիրի գլխաւոր նահանգապետին նոյն իրաւունքներ են տուած, ինչ որ տուած էին ժամանակաւոր գլխաւոր նահանգապետներին: Իշխան Գօրչակօվի առողջութիւնը առաջվայ դրութեան մէջ է:

Կ. ՊՕԼԻՍ, 3|15 ապրիլի: Պրիզրէնի մօտ երևեցան ալբանիացի զինւորված խումբեր: Մուխտար-փաշա գնում է նրանց ցրվելու համար:

ԲԷԼԳՐԱԴ, 3 ապրիլի: Արնաուտները մտան Սերբիա, Բուջօշենի մէջ կռւով վերցրին զէնքերի և պաշարի պահեստները: Սերբիան Թիւրքիային եռանդոտ բողոք ներկայացրեց:

ԼՈՆԴՈՆ, 7 ապրիլի: Այսօր Բիկօնսֆիլդ ներկայացրեց Թագուհուն իր հրաժարականի մասին խնդիրքը: Թագուհին ընդունեց նրա հրաժարականը:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

տանց «քէֆի» չի անցկացնի, նրան կը դուարճացնեն և նրանից փողեր կը ստանան:

Շուտով յայտնվեցան «չալկիները», գլուխ տուեցին և չարվեցան սեղանի շուրջը: Տանտիկինը այժմ ստիպված էր կերակուրների քանակութիւնը աւելացնել:

Էֆէնդին բարեհաճեց հարցնել «չալկիների» առողջութիւնը:

—Ձեր շնորհիւ ամենքս էլ լաւ ենք, պատասխանեցին նրանք:

Երբ կերան, խմեցին, կշտացան, Վառվառէն կրկին դուրս եկաւ իր թագստի տեղից և սկսեց սեղանը հաւաքել: Բայց արաղի մեծ ամանը անշարժ մնաց իր տեղում: Նա արդէն մի քանի անգամ դատարկ գինետուն էր գնացել և լիքը յետ դարձել: Բաժակները շարունակ պտըտվում էին: «Չալկիների» գլուխներն էլ տաքացան:

—Հիմա սկսեցէք, հրամայեց էֆէնդին:

Նրանք սկսեցին: Փոքրիկ խրճիթը կենդանացաւ ասիական երաժշտութեան խառնաշփոթ և աղմկալի հնչիւններով:

Էֆէնդին զմայլում էր իր սրտի ամենախորը տրամադրութեան մէջ:

Քանի րոպէից յետոյ արհեստաւոր Պետրոսի խրճիթի շուրջը և կտուրի վրա հաւաքվեցան դրացի կնիկները, աղջիկները, և սկսեցին երդիկներից ու լուսամուտներից նայել, և զուարճանալ նուագածութեան ձայներով: Ոչինչ այնքան չէ ուրախացնում գիւղացի կնոջը որպէս երաժշտութիւնը, որին նա շատ կարօտ է մնում, միայն ձմեռը հարսանիքների ժամանակ լսելու բախտ ունենալով:

Փոքր առ փոքր «մէջլիսը» տաքացաւ և աւելի բազմադրեալ կերպարանք ստացաւ: Արաղի արբեցութեան և «չալկիների» նուագածութեան ձայների հետ տիրեց ընդհանուր խառնակութիւն: Ինչպէս ասում են՝ «շունը էլ իր տիրոջը չէր ճանաչում»: Ամեն մարդ գլուխը կորցրել էր: Միայն էֆէնդին զգաստ էր, միայն նա իրան պահել էր իմանում: Այդ միջոցին դրսում հաւաքված կնիկների և աղջիկների բազմութիւնը համարձակութիւն ստացաւ, և կամաց կամաց ներս մտնելով, նրանք նստեցին Սուսանի և Վառվառէի մօտ, և սկսեցին այնտեղից լսել երաժիշտներին:

—Պար, պար, բացականչեց էֆէնդին ծափ տալով,—պար եմ ուզում:

Այդ միջոցին դրացի Օհօն, որ հազիւ կարողանում էր իրան ոտքի վրա պահել, վերկացաւ, և հանդիսականների միջից բռնելով երկու փոքրիկ աղջիկների ձեռքից, համարեա զօռով քարշ տուեց, բերեց կանգնեցրեց խրճիթի մէջտեղում: Երաժիշտները ածեցին տեղային պարի մի եղանակ: Փոքրիկ աղջիկները մի փոքր ամաչեցին, մի փոքր կարմրեցան, մի փոքր «չենք կարող» ասեցին, վերջապէս սկսեցին պարել:

—Շաբաշ, շաբաշ *) գոռում էին երաժիշտները, աւելի թունդ կերպով ածելով:

Եւ էֆէնդին դնում էր մի-մի արծաթի դրամ պարողների ափի մէջ, նրանք տալիս էին երաժիշտներին:

Պարը, որպէս սովորաբար լինում է, սկսվեցաւ փոքրիկ աղջիկներից և հետզհետէ հանդիսացան աւելի հասակաւորները: Առաջին զոյգը յոգնելուց յետոյ իրանց ձեռքի թաշկինակները ձգեցին ուրիշ երկու աղջկայ վրա. այդ նշան էր, որ այժմ նրանք պէտք է պարէին: Այսպէս հերթը հետզհետէ փոխվում էր, և ամեն անգամ մէջ էին մտնում մի զոյգ պարողներ: Էֆէնդին առատութեամբ լցնում էր նրանց բուռը արծաթի «չայրաններով», և երաժիշտները եռանդով ածում էին:

Հերթը հասաւ Վառվառէին: Գեղեցիկ աղջիկը գերազանցեց բոլորից իր շնորհալի պարով: Նրա ամեն մէկ շարժումների մէջ նշմարվում էր գրացիայ և կախարդիչ հրապուրանք:

—Մեր երկրում, խօսեց էֆէնդին, հայերի մէջ մի լաւ սովորութիւն կայ, երբ աղջիկը իր պարը վերջացնում է, մօտենում է տան պատուաւոր հիւրին, չոքում է նրա առջև, գլուխը դնում է նրա ծնկի վրա, և այնքան ժամանակ չէ բարձրացնում, մինչև նրանից մի լաւ ընծայ չէ ստանում *):

—Այդ շատ լաւ սովորութիւն է, ձայն տուեցին երաժիշտները,—պէտք է այստեղ էլ մտցնել այդ սովորութիւնը:

—Վառվառէ, դու պիտի լինես առաջին օրինակը, ասաց նրան էֆէնդին.—դէ, մօտեցիր, զաւակս:

Վառվառէն ամօթխածութիւնից բոլորովին շփոթվեցաւ և անշարժ մնաց իր տեղում: Նա աւելի բարւոք էր համարում, որ գետինը պատռվէ և իրան կուլ տայ, քան թէ գլուխը մի օտար մարդու գրկումը դնէ: Բայց ամեն կողմից նրան բռնեցին, քաշքշեցին, ասելով, «աղջի, դնա, մի ամաչիր, քեզ բան կը տայ»—և վերջապէս նրան ուժով տարան էֆէնդու մօտ, և նա ստիպվեցաւ իր գեղեցիկ գլուխը դնել էֆէնդու ծնկների վրա: Էֆէնդին փայփայեց Վառվառէի սիրուն գիսակները և դրեց նրա ափի մէջ երկու ոսկի:

Մինչ էֆէնդին այսպիսի քէֆերով էր զբաղված, ներս մտաւ նրա զափթիաներից մէկը, մօտեցաւ, և ականջին ասաց. «այն մարդին, որի համար պատուիրած էիք, գտանք»:—«Բռնեցէք, և ամենայն զգուշութեամբ պահեցէք, մինչև ես առաւօտեան կարգադրութիւն կանեմ», հրամայեց էֆէնդին անլսելի ձայնով:

Զափթիան հեռացաւ:

Ինչ մարդու համար էր այդ կարգադրութիւնը,—ոչ ոք չը հասկացաւ:

Արդէն գիշերից բաւական անցել էր: Արհեստաւոր Պետրոսի խրճիթը փոքր առ փոքր դատարկվեցաւ: Երաժիշտները հեռացան: Դրացի Օհօն արբեցութիւնից բոլորովին անզգայ իր տունը տարան: Բազմութիւնը ցրվեցաւ:

Արհեստաւորի խրճիթի մէջ մնաց միայն պատուելի հիւրը գզիրի հետ, որը այնքան խմել էր, որ ունեցած մի հատիկ աչքն էլ ոչինչ չէր տեսնում: Սուսանը անկողին պատրաստեց էֆէնդու համար, ճրագները հանգցրին և բոլորը հանգստացան:

Այն գիշերը ինչ էր պատահել,—Աստուած գիտէ: Բայց առաւօտեան Վառվառէն շատ տխուր էր, և արտասուքը խեղճ աղջկայ աչքերից մի քանի օր չէր ցամաքում...

Նոյն գիշերվայ առաւօտեան պահուն, դեռ լոյսը չը բացված, այս գիւղի մէջ կատարվեցաւ մի ուրիշ ցաւալի անցք. մի երիտասարդի շղթաներով կապած, տարան զինուորական գործակատարի մօտ, որ նոր եկել էր այս կողմերում պատերազմական կարգադրութիւնների համար:

Գիւղացիներից ոչ ոք չը տեսաւ նրան,—միայն Թօմաս էֆէնդին խաւարի միջից, նրա ետևից նայելով, մի առանձին գիւական հրճուանքով ասում էր իր մտքում. «գնա այսուհետև, որքան կարող ես, փչիր քո դուդուկը»...

Այդ երիտասարդը պ. Դուդուկչեանն էր, կամ մեր այժմեան պ. Սալմանը:

(կը շարունակվի)

---

*) Շաբաշ նչ. այն արծաթը, որ ստանում են պարողները հանդիսականներից և յետոյ տալիս են երաժիշտներին:

*) Հայաստանում ոչ մի տեղ չը կայ այսպիսի սովորութիւն. միայն ասիական բօշաների տղաները և կնիկները պարելու ժամանակ գործ են ածում այս տեսակ հրապուրիչ ձևեր հանդիսականներից փող ստանալու համար:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դուրս եկաւ մամուլի տակից և ԾԱԽՎՈՒՄ է թէ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ և թէ Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆԻ գրավաճառանոցներում և պ. Ծատուրեանի խանութում «ՔԵՐԹՈՒԱԾՔ և ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ, պ. Ն. ԱԴԱՄԵԱՆԻ, Հրատարակութիւն Ս. Արծրունու: Գիրքը բաղկացած է 243 ԵՐԵՍՆԵՐԻՑ: Գինն է 1 ր. 25 կ.:

4—5

Nous recommandons aux jeunes gens qui désirent aller en France terminer leurs etudes, l'Institution ROUSSEL à MARSEILLE. (Cours Julien, 14).—Des soins particuliers sont, donnés aux langues vivantes. Sadresser á l'Institution, qui envoie un prospectus.

3—4

ՆԵՐԿԱՅ 1880 ԹՒՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՅԾԵՐ“

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակութիւն ՐԱՖՖԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից, իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երեսներ: Ամեն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում:

Ստորագրվել կարելի է ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «Մշակի» խմբագրատանը Յ. ՄԷԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆԻՆ:

Մամուլի տակից դուրս եկաւ դօկտոր Բօկի «Ուսումն առողջապահութեան» գրքոյկի հայերէն թարգմանութիւնը: Գրքի պահեստը գտնվում է Զաքարիա Գրիգորեանցի Կովկասեան Գրավաճառանոցում: Գինն է 35 կոպ.

Պ. ԱԴԱՄԵԱՆԸ ցանկանում է ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ և գոյների բաղադրութեամբ ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ դասեր տալ: Պայմանների մասին կարելի է նրա հետ խօսել նրա բնակարանում, Գօլովինսկի պրօսպէկտի վրա, Մուխրանսկու տանը, Կուքի տակ, առաւօտները 10—12 ժամ, և երեկոները 5—8 ժամ: Դասերը կարող է տալ թէ իր բնակարանում և ցանկացողների տները այցելելով: Նոյնպէս ընդունում է պատուէրներ ԿԵՆԴԱՆԱԳԻՐՆԵՐ նկարելու համար:

10—10

Օրերումս դուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Զ. Գրիգորեանցի Կովկ. գրավաճառանոցում:

1. Ադամեան—քերթուածք և թարգմանութիւնք. Տփխիս 1880 թ. գինն է 1 ր. 25 կ.:
2. Դօկտոր Բօկ—Ուսումն առողջապահութեան Տփ., 80 թ. — 35 կ.:
3. Փրէյդուն—Տաւիղ յիմարի Տփ. 80 թ. — 30 կ.:
4. Դուկասեանց—ընդհանուր պատմութիւն հայոց դպրոցների համար, հ. ա. Տփ. 80 թ. — 80 կ.:
5. Գամառ-Քաթիպայ — մանկական երգեր 80 թ. անկազմ — 15 կ.:
6. Նոյնը կազմած — 25 կ.:
7. Սիլվիօ Փէլլիքօի Ռիմինիացին Փրանկիսկէ (Ֆրանչէսկա դա Ռիմինի). Դանտէի Ֆրանչէսկան, Լէօփարդիի առ Իտալիան. Տարօնոյ ծերը: Ռ. Մ. Ե. Պ. Տփ. 80 թ. գինն է — 70 կ.:

9—10

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Դավրօնսկի կանանց հիւանդ. Դօրալեվիչ ներքին հ., Ռօտինեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտէյմբօրսկի վեներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ., Վզօրօվ վեներական և բողազի հ., Ռէյխ աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեադօվ, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Բուդկօվսկի ներքին հ., Շտէյմբօրսկի վեներական և կաշու հ., Աստուածատուրօվ կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզօրօվ վեներական և բողազի հ., Ռօտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Դավրօնսկի կանանց հ., Մինկեվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադօվ և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմբօրսկի և Աստուածատուրօվ վեներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբօվ կուրծքի հ., Եանկօվսկի վեներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզօրօվ բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրիական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Ատամնաբոյժ Օրբելի աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

Մ. Մինասարեանցի ի ներքոյ յիշեալ տպագրութիւնների ամեն մի տպագրութեան մնացած բոլոր օրինակները միասին գնողներին (Թիֆլիս, Հայոց Վանքի Մեծ և Փոքր փողոցների անկիւնում, տպագրողի սեպհական տանը, № 4|2, բնակարան № 6) կը վաճառուին յետագայ գներով:

1. Հայկական Քնար, երգարան, 8 ծալ, եր. 712 և առանձին 32 եր. այբբենական ցանկ, երկուսը միասին . . . . 70 կ.

4 հազար օրինակից մնացել է մօտ հազար օրինակ, մօտ 700 րուբլու:

2. Կանոնաւոր և վայելուչ գրութեան պատմութիւնը և տեսութիւնը, զանազան առանձին յաւելուածներով, 8 ծալ, եր. 274 . . . . 20 կ.

1200 օրինակից մնում է մօտ 700 օրինակ, մօտ 140 րուբլու:

3. Վայելչագրութեան գաղափարներ, 4 ծալ, 24 երես: 6 հազար օրինակից կը լինի մնացած մօտ 4 հազար օրին., մօտ 500 րուբլու: . . . . 10 կ.

4. Գունատ մելանով տպած վայելչագրութեան վարժութիւններ, որ տպածի վրա սև թանաքով գրելով, դիւրութեամբ կարելի լինի ուղղել և գեղեցկացնել ուսանողի գրութիւնը: № 1—№ 5, հասարակ թղթի գնով, տ. ստոպան, կամ 480 թերթը, 4 րուբլի, մօտ 340 ստոպ, մօտ 1360 րուբլու: Թերթը մի կոպէկից պակաս:

5. Տողաշարներ և տողացանցեր մեծ թարաղա, 4 երես տպած, 6 հազար օրինակից մօտ 4 հազ. օրինակ կը լինի, մօտ 52 րուբլու, թերթը . . . . 5 կ.

6. Կոմբ ուսուցչապետի և անգղիացւոց թագուհու բժշկի խնամատարութիւն երեխայոց, 8 ծալ, եր. 300: . . . . 15 կ.

1200 օրինակից մօտ 300 օրինակ կը լինի մնացած, մօտ 52 րուբլու:

Մի քանի այլ տպագրութիւններ մօտ 20 րուբլու:

Տպագրողը ինքը բնակվում է Ս. Պետերբուրգ, Знаменская, домъ № 22, кв № 7, на углу Басейной.

Վաճառվում է նոր հրատարակված «Յիմարի Տաւիղ» Փրէյդունի գրքոյկը պ. Զ. Գրիգորեանցի և Կենտրոնական գրավաճառանոցներում: Գրքոյկի գինն է 30 կ., գաւառներից ցանկացողները կարող են ուղղակի դիմել Պ. Յովհաննէս Սուզանաճեանցին հետևեալ հասցէով. Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджіанъ. на Петхайнской ул. собственый домъ № 13.

Դուրս եկաւ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԴԱՇՆԱԿԻ ՀԱՄԱՐ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՄԲ

Ձայնագրութիւն և հրատարակութիւն Յովհաննէս Սուզանաճեանցի: Իւրաքանչիւր օրինակի գինն է մէկ րուբլի: Վաճառվում է յօգուտ Վանայ սովատանջների Թիֆլիսի բոլոր երաժշտական մագազիններումը: Գումարող անձներին զիջումն կը լինի: Օտարաքաղաքացիք դիմում են հետևեալ հասցէով. Въ Тифлисъ Ивану Артемьевичу Сузанаджянъ, на Петхайнской улицѣ, собственный домъ № 13. Ցանկացողները ստանալ միասին և «Յիմարի Տաւիղ» երգարանը, պէտք է ուղարկեն մէկ րուբլ երեսուն կոպ.:

Փետրվարի 12-ից ԲԱՑՎԵՑ իշխան ՍՈՒՄԲԱՏՕՎԻ տանը ԿՕՆԴԻՏԵՐԻ և ՀԱՑԱՐԱՐԻ (пекарня) մագազին «ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ» վերնագրով, որտեղ կը վաճառվին զանազան տեսակ խմորեղէններ, նոյնպէս կը վաճառվին զանազան տեսակ կօնֆէտներ արժան գնով. թէ փոքր և թէ մեծ քանակութեամբ ցանկացողները կարող են ստանալ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ: Օտար քաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. СОЛОЛАКИ, ВЪ ВАРШАВСКОИ ПЕКАРНИ Мартиросу Ахназарову. Պատուէրները կը կատարվեն ամենայն ճշտութեամբ, գնողներին մեծ զիջումն անելով և փօստի ծախսը մեզ վրա առնելով. կօնֆէկտների գինը ֆունտը 40 կոպէկից մինչև 1 ր.:

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ, որ ՎԿԱՅԱԿԱՆ ունի և իմանում է ՌՈՒՍԱՑ, ՖՐԱՆՍԻԵՐԷՆ ԵՒ ԳԵՐՄԱՆԵՐԷՆ լեզուները ԴԱՍԵՐ է փնտռում: Հասցէն ԿԱՄԵՆԴԱՆՏՍԿԱՅԱ փողոց, տուն ՇԱԽՄՈՒՐԱԴՕՎԻ, № 23:

1—4 (2)

Կուկիոյ Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ «Թանդոյեանց» օրիորդաց ուսումնարանի հոգաբարձութիւնը, տալիս է կապալով նոյն ուսումնարանապատկան կրպակները և սենեակները: Պայմանաթուղթը կարելի է կարդալ նոյն ուսումնարանումը ամենայն օր, իսկ աճուրդախօսութիւնը կը լինի ամսոյս 24-ին առաւօտեան 10 ժամին:

1—2

Յունվարի 31-ին 1880 թ. Նորին Կայսերական Բարձրութիւն Կովկասի Փոխարքան բարեհաճեցաւ հաստատել «Թիֆլիսի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան» կանոնադրութիւնը: Այս ընկերութիւնը մարտի 9-ին ունեցաւ ընդհանուր ժողով, որը ընտրեց իր վարչութեան և խմբագրական մասնաժողով:

Այն անձինք, որոնք կը ցանկանան ընկերութեան անդամ գրուել, կարող են դիմել ընկերութեան գանձապահ պարոն Մովսէս Թաւաղեանին Թիֆլիսի Առևտրական բանկայ առաւօտեան 9-ը ժամից մինչև 2 ժամը: Իսկ այլ և այլ խնդիրներ և տեղեկութիւններ այդ ընկերութեան մասին ստանալու համար պէտք է դիմել ընկերութեան վարչութեան նախագահ՝ պարոն Արգար Յովհաննիսեանին: Վարչութեան ատենադպիր Ա. Քիշմիշեան:

8—10

Տպագրութեան համար պատրաստ են. «Դօն Կարլոս» (հետաքննութիւն ճշմարտութեան) Պրէսկօտի, «Աբրահամ Լինկօլն՝ ստրուկներին ազատող» Վիլհելմ Հօֆմանի, և Մոլիէրի «Ամուսնացողներին խրատ» հայթարգմանութիւնները:

Թարգմանվումեն Մոլիէրի հետ «Տարտիւֆ կամ Կեղծաւոր» և «Կեղծ հիւանդ» կատակերգութիւնները:

Անցած փետրվարի 17-ից նօտարական ակտով վերջացնելով բոլոր դրամական հաշիւները իմ առևտրական ընկերակցութեան վերաբերութեամբ Թիֆլիսի 2-դ գիլդիայի վաճառական ՍԵՐԳԷՅ ԳՐԻԳՈՐԵՎԻՉ ԼԱԶՐԵՎԻ հետ, սրանով յայտնում եմ, որ եթէ մի որ և իցէ մարդու մօտ կը գտնվեն ՄԻՆՉԵՒ ՆԵՐԿԱՅ ԹԻՒԸ, իմ Նրան տուած տոմսակներ (росписки) մանաւոր և բանկային վէկսէլներ, և բոլոր ուրիշ պարտամուրհակներ և ակտեր, ես անւավեր եմ համարում և ինձ պարտաւոր չեմ համարում վճարել:

Թիֆլիսի 2-դ գիլդիայի վաճառական ԴԱՆԻԷԼ ԱՐՏ. ԱԼԱՎԵՐԴՕՎ:

Дозволено Цензурою 8 Апрѣля 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона